



ՀՀ Առողջապահության
նախարարություն



ՀՀ ԱՆ ՁԻԱՅ-ի կանխարգելման
հանրապետական կենտրոն

«ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի ԱՐԴԻԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ

Դեկտեմբերի 8

«Մարիոթ Արմենիա» հյուրանոցում կայացավ ՀՀ ԱՆ ՁԻԱՅ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի հիմնադրման 20-ամյակին նվիրված «ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի արդիական հարցերը» թեմայով միջազգային կոնֆերանս: Կոնֆերանսին մասնակցում էր 8 երկրներից ավելի քան 230 մարդ՝ առողջապահության և հասարակական ոլորտների ղեկավարներ, մարզպետարանների առողջապահության վարչությունների պետեր, բուժկանխարգելիչ հաստատությունների տնօրեններ, բուժաշխատողներ, հասարակական և միջազգային կազմակերպությունների անդամներ, ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի ոլորտի ակտիվիստներ, ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ից տուժած մարդիկ, հյուրեր: Կոնֆերանսին ներկա էին նաև արտասահմանյան հյուրեր, որոնց թվում էին ՁԻԱՅ-ի, տուբերկուլոզի, մալարիայի դեմ պայքարի գլոբալ հիմնադրամի (ԳՀ) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի պորտֆոլիո մենեջեր Սանդրա Իրբեն, Բաց հասարակության ինստիտուտի մեթոդոլոգի Ժրազրի փորձագետ, կախվածության բուժման զարգացման միջազգային Ժրազրի տնօրեն Ջոլի Կատանիան (Նյու Յորք, ԱՄՆ), ԱՀԿ եվրոպական տարածաշրջանային գրասենյակի բժշկական զծով ավագ մասնագետ Իրինա Երանովան և ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց համաուկրաինական ցանցի համակարգող խորհրդի նախագահ, Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց կազմակերպությունների միավորման նախագահ Վլադիմիր Ժովտյակը:

Կոնֆերանսը բացեց և ողջույնի խոսքով հանդես եկավ ՀՀ առողջապահության նախարար, պրո-

ֆեսոր Հարություն Քուշկյանը: Ողջույնի խոսքից հետո Հ.Քուշկյանը առողջապահության համակարգում երկարամյա և անբասիր աշխատանքի, ինչպես նաև ՀՀ ԱՆ ՁԻԱՅ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի (ՁԻԱՅ-ի ԿՀԿ) հիմնադրման 20-ամյակի առթիվ ՀՀ ԱՆ ՁԻԱՅ-ի ԿՀԿ-ի տնօրեն Սամվել Գրիգորյանին և Կենտրոնի ևս 19 աշխատակցի հանձնեց ՀՀ ԱՆ պատվոգրեր: Բացման արարողությանը ելույթ ունեցան նաև ՀՀ ԱԺ առողջապահության, մայրության և մանկության մշտական հանձնաժողովի նախագահ Արա Բաբլոյանը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության



առողջապահության նախարարության պետական հիգիենիկ-հակահամաճարակային տեսչության ՀՀԿ-ի տնօրեն Օֆելյա Գրիգորյանը, որը ՀՀ ԱՆ ՁԻԱՅ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի հիմնադրման 20-ամյակի կապակցությամբ Կենտրոնի տնօրեն Սամվել Գրիգորյանին հանձնեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարի պատվոգիրը՝ ԼՂՀ-ում 2009-2013թթ. ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ին հակազդման հանրապետական Ժրազրի մշակման գործում ունեցած աջակցության, ինչպես նաև ԼՂՀ առողջապահության նախարարության հետ համագործակցության համար:

Կոնֆերանսի բացմանը ելույթ ունեցան նաև ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց համաուկրաինական ցանցի համակարգող խորհրդի նախագահ, Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց կազմակերպությունների միա-






վորման նախագահ Վլադիմիր Ժվոյակը, «Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՀԿ-ի համանախագահ Հովհաննես Մադոյանը:



Բացման արարողության ավարտից հետո սկսվեց լիազույժ միստր: Առաջինը ելույթ ունեցավ ՀՀ ԱՆ ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի տնօրեն, ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի միջոցառումները համակարգող հանձնաժողովի (ՄՀՀ) քարտուղար Սամվել Գրիգորյանը: Նա



ներկայացրեց ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակը Հայաստանում և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումները:

Այնուհետև զեկուցումով հանդես եկավ ԳՀ-ի Արևելյան եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային պորտֆոլիո մենեջեր Սանդրա Իրբեն: Նա պարզաբանեց ԳՀ-ի դերը ՁԻԱՀ-ի և տուբերկուլոզի ազգային ծրագրերին աջակցության գործում, մասնավորապես, թե ինչ աջակցություն է տրամադրում ԳՀ-ն ՁԻԱՀ-ին և տուբերկուլոզին հակազդմանը աշխարհում և Հայաստանում: Նա ներ-

կայացրեց ԳՀ-ի կողմից ֆինանսավորվող «Օժանդակություն ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ազգային ծրագրին» դրամաշնորհի արդյունքները և



հիմնական նվաճումները, ինչպես նաև առաջիկա ծրագրի մարտահրավերները, ակնկալվող արդյունքները:

Հայաստանում, Ադրբեջանում, Վրաստանում ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միացյալ ծրագրի տարածաշրջանային համակարգող Մանուելա Գրոզանովան ներկայացրեց տարածաշրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման, բուժման, խնամքի և աջակցության համընդհանուր հասանելիությանն ուղղված առաջընթացը՝ ընդգծելով տարածաշրջանի առանձնահատկությունները:

ԱՀԿ եվրոպական տարածաշրջանային գրասենյակի մասնագետ Ի.Երամովան ներկայացրեց հակառետրովիրուսային (ՀՌՎ) բուժման և ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց կյանքի որակի բարելավման փոխկապակցվածությունը, ՀՌՎ բուժման ԱՀԿ նոր մոտեցումները, ՄԻԱՎ վարակ/վիրուսային B և C հեպատիտներ, ՄԻԱՎ/տուբերկուլոզ համավարակների ժամանակ բուժման առանձնահատկությունները:



Հաջորդ ելույթ ունեցողը՝ ՀՀ ԱԺ առողջապահության, մայրության և մանկության մշտական հանձնաժողովի փորձագետ Լենա Նանուշյանը ներկայացրեց այն փոփոխությունները, որոնք կատարվել են ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ոլորտում գործող օրենսդրության մեջ՝ այն միջազգային ղեկավարող սկզբունքներին համապատասխանեցնելու նպատակով: Մասնավորապես նա խոսեց միջազգային նորմերին «Մարդու իմունային անբավարարության



վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» ՀՀ նախկին օրենքի որոշ դրույթների անհամապատասխանության և կատարված փոփոխությունների մասին: Իր ելույթի վերջում Լ.Նանուշյանը ընդգծեց օրենքում կատարված փոփոխություններից բխող համապատասխան ենթաօրենսդրական ակտերի ընդունման անհրաժեշտությունը:

Այնուհետև սկսվեցին և զուգահեռաբար ընթացան չորս նիստեր հետևյալ խորագրերով՝

1. Բնակչության առավել վտանգի ենթարկվող խմբերի շրջանում ՄԻԱՎ-ի կանխարգելում, վնասի նվազեցում,
2. ՄԻԱՎ/ՁԻԱՅ. համավարակներ, օպորտունիստական հիվանդություններ. բուժում, կանխարգելում, խնամք,
3. ՄԻԱՎ վարակի համաճարակին բազմաոլորտային հակազդում,
4. ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ին առնչվող հետազոտություններ, համաճարակաբանական հսկում:

Չուգահեռ նիստերն ամփոփվեցին դրանց հաջորդած լիագումար նիստի ժամանակ: Առաջին նիստի աշխատանքներն ամփոփեց «Հակաթմրանոլային քաղաքացիական դաշինք» ՀԿ-ի նախագահ Արթուր Պոտոսյանը: Նա ներկայացրեց այդ նիստի ընթացքում կատարված զեկուցումները, որոնց թվում են եղել «ՁԻԱՅ-ի կանխարգելում, կրթություն և խնամք» ՀԿ-ից Վահե Բաբախանյանի «Երիտասարդներն ու ՄԻԱՎ վարակը, հոգեբանական ասպեկտները» թեմայով զեկուցումը, Մուղդվայի նարկոլոգիայի հանրապետական դիսպանսերից Լյուբովի Անդրեևայի «Մեթադոնով փոխարինող բուժումը Մուղդվայում» զեկուցումը: Այնուհետև ներկաները լսել են «ՁԻԱՅ-ի կանխարգելման միավորում» ՀԿ-ից Լուսինե Ստեփանյանի զեկուցումը՝ «Կիրբեր աուբրիչի կիրառումը կոմերցիոն սեռական ծառայություններ տրամադրող կանանց շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերում» թեմայով, Մուղդվայի արդարադատության նախարարության ազատագրկման վայրերի բժշկական բաժանմունքից Իլոնա Բուրդուջայի՝ «ՄԻԱՎ վարակի կանխարգելումը Մուղդվայի քրեակատարողական հիմնարկներում» թե-

մայով զեկուցումը, «Ուսուցում հանուն առողջության պահպանման» ՀԿ-ն ներկայացնող Ռաֆաել Օհանյանի՝ «ՀՀ-ում տղամարդու հետ սե-



ռական հարաբերություն ունեցող տղամարդկանց շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելիչ աշխատանքների իրականացում» թեմայով զեկուցումը, Մուղդվայի ՄԻԱՎ-ի կանխարգելման և վնասի նվազեցման միավորումը ներկայացնող Ալլա Յացկոյի՝ «Վնասի նվազեցման ռազմավարությունը Մուղդվայում. փորձ, արդյունքներ, հեռանկարներ» զեկուցումը:

Երկրորդ զուգահեռ նիստի աշխատանքները ներկայացնող, ԱՀԿ հայաստանյան գրասենյակի վարակիչ հիվանդությունների ծրագրերի համակարգող Գայանե Ղուկասյանը տեղեկացրեց, որ ներկաները լսել և քննարկել են հետևյալ զեկուցումները՝ «Հեպատիտ C և ՄԻԱՎ համավարակ», որով հանդես է եկել Ի.Երամովան՝ ԱՀԿ եվրոպական տարածաշրջանային գրասենյակից, «ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ով ապրող հիվանդների շրջանում ՀՌՎ բուժման արդյունավետությունը», որը ներկայացրել է ՀՀ ԱՆ ՁԻԱՅ-ի ԿՀԿ-ից Աննա Աթաբեկյանը: «ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ով հիվանդների շրջանում տուբերկուլոզի տարածվածությունը և այդ հիվանդների վարումը» զեկուցումը ներկայացրել է Արմինե



Պեպանյանը՝ ՀՀ ԱՆ ՁԻԱՅ-ի ԿՀԿ-ից, իսկ «Արմենիկում» կլինիկական կենտրոնը ներկայացնող Վիդեա Սարգսյանը հանդես է եկել «Արմենիկում դեղամիջոցի անվտանգությունը, տանելիությունը և արդյունավետությունը ՄԻԱՎ վարակով հիվանդների մոտ» զեկուցումով: «Վալցիտ. ցիտոմեգալովիրուսային վարակի բուժման նոր մոտեցումները

ՄԻԱՎ վարակով հիվանդների շրջանում» զեկուցումով ներկայացել է Արմեն Մկրտչյանը՝ ՀՀ ԱՆ ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ից: «ՀՀ-ում ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց տրամադրվող խնամք և աջակցություն. քաղված դասեր, մարտահրավերներ, ձեռքբերումներ» թեմայով է հանդես եկել «Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՀԿ-ի համանախագահ Հովհաննես Մադոյանը:

Երրորդ զուգահեռ նիստն ամփոփեց ՀՀ ԱՆ ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի համաճարակաբանական հսկման բաժնի վարիչ, ՄՀՀ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի խնդիրներով զբաղվող աշխատանքային խմբի ղեկավար Արշակ Պապոյանը: Նա ներկայացրել էր «ՄՀՀ-ի դերը ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հակազդմանն ուղղված ծրագրերի համակարգման և հսկողության գործում» զեկուցումը: Այնուհետև ներկաները լսել են հետևյալ զեկուցումները՝ «Օժանդակություն ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ազգային ծրագրին» ծրագրի ձեռքբերումները», որով հանդես է եկել Կամիլա Պետրոսյանը՝ «Վորլդ Վիժն Հայաստան» կազմակերպությունից, «ՄԻԱՎ/ՁԻԱՀ և հոգեկան առողջություն. առաջին քայլեր» զեկուցումը, որը ներկայացրել է Նելլի Չոլախյանը՝ ՁԻԱՀ-ի Հայկական ազգային Հիմնադրամից: «ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման



կարողությունների ստեղծում. համատեղ ծրագրերի իրականացման առավելությունները» զեկուցումով հանդես է եկել ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամը ներկայացնող Աիդա Ղազարյանը, «ՀՀ-ում ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ խարանի ու խտրականության նվազեցմանն ուղղված միջոցառումները» ներկայացրել է Էլմիրա Բախշինյանը՝ «Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՀԿ-ից, իսկ «Բազմաողորտային մոտեցում միգրանտների շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելմանը» զեկուցումով հանդես է եկել Վարդան Արզաքանյանը՝ ՀՀ ԱՆ ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ից:

Ինչպես տեղեկացրեց չորրորդ զուգահեռ նիստն ամփոփող, Հայաստանում ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միացյալ ծրագրի սոցիալական մոբիլիզացման և համագործակցության հարցերի խորհրդատու Նաիրա Սարգսյանը, այս նիստում ներկայացվել են հետևյալ զեկուցումները՝ «2002-2007թթ. ՀՀ-ում բնակչության առավել վտանգի ենթարկվող

խմբերի շրջանում ՄԻԱՎ-ի տարածվածության և վարքագծային առանձնահատկությունների դինամիկան», որով հանդես է եկել Էդուարդ Հովհաննիսյանը՝ ՀՀ ԱՆ ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ից, «Իրավական աջակցություն թմրամիջոց գործածողներին» զեկուցումը, որը ներկայացրել է Վանաձորի Հելսինկյան քաղաքացիական Ասամբլեայի գրասենյակից Արթուր Սաքունցը: Վրաստանից ժամանած և



Կուրատիո միջազգային հիմնադրամը ներկայացնող Իվոնիթի Չիկովանին հանդես է եկել «ՄԻԱՎ վարակը և դրան առնչվող ռիսկային վարքագիծը թմրամիջոցների ներարկային օգտագործողների շրջանում Վրաստանում. 2008-2009թթ. վարքագծային և կենսաբանական հետազոտությունների արդյունքները» զեկուցումով, «Տղամարդու հետ սեռական հարաբերություն ունեցող տղամարդկանց և կոմերցիոն սեռական ծառայություններ տրամադրող կանանց խմբերի չափի գնահատում» թեմայով է հանդես եկել ՀՀ ԱՆ ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ից Տրդատ Գրիգորյանը, «Դպրոցականների շրջանում ալկոհոլ և թմրամիջոցների տարածվածության ուսումնասիրություն» զեկուցումը ներկայացրել է Արտակ Մուշեղյանը՝ «ՁԻԱՀ-ի կանխարգելում, կրթություն և խնամք» ՀԿ-ից, «Երևանի կոմերցիոն սեռական ծառայություններ տրամադրող կանանց շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելման կարճատև միջամտության արդյունավետությունը» զեկուցումով հանդես է եկել Կարինե Մարկոսյանը՝ Հայաստանի Ամերիկյան համալսարանից:

Բոլոր զուգահեռ նիստերում զեկուցումների ավարտին հետևել են հարցուպատասխաններ, ընթացել են բուռն քննարկումներ, կատարվել է կարծիքների և փորձի փոխանակում:

Կոնֆերանսի ընդմիջմանն անցկացվեց ճեպագրույց ՁԼՄ ներկայացուցիչների համար:

«ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի արդիական հարցերը» միջազգային կոնֆերանսի աշխատանքներն ամփոփեց կոնֆերանսը նախագահող, կոնֆերանսի կազմկոմիտեի նախագահ, ՀՀ ԱՆ ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի տնօրեն, պրոֆեսոր Սամվել Գրիգորյանը: Նա նշեց Կոնֆերանսի արդյունավետ աշխատանքի մասին, ակտիվ մասնակցության համար շնորհակալություն հայտնեց ներկաներին, հատկապես միջազգային հյուրեր-



րին և հասարակական կազմակերպությունների
ներկայացուցիչներին:

Համաձայն ՀՀ ԱՆ Առողջապահության ազգային
ինստիտուտի գիտական խորհրդի որոշման՝ տպա-
գրվել է ՀՀ ԱՆ ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապե-
տական կենտրոնի 20-ամյակին նվիրված
«ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի արդիական հարցերը» հոբելյանա-
կան կոնֆերանսի նյութերի ժողովածուն, որն իր մեջ
ներառում է «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի արդիական հարցերը»
թեմայով կոնֆերանսի գիտագործնական նյութերը՝
շուրջ 120 հոդված և թեզիս (այդ թվում՝ արտասահ-
մանյան հեղինակների):

